ՀՈՒՇԱԹԵՐԹ

կոռուպցիոն բնույթի փաստերի և կասկածների մասին տեղեկացնելու ընթացակարգի վերաբերյալ

«ՀԱԷԿ» ՓԲԸ և կապալառու կազմակերպությունների հարգելի՝ աշխատակիցներ,

Կոռուպցիոն դրսևորումներին հակազդելը հանդիսանում է ՀԱԷԿ-ի տնտեսական, արտադրական, միջուկային, ֆիզիկական և ռադիացիոն անվտանգության ապահովման կարևոր տարրերից մեկը: Կոռուպցիան սպառնում է կայանի անվտանգությանը և հեղինակությանը:

ՀՀ կառավարության թիվ 48-Լ առ 14.01.2021թ-ի որոշման համաձայն՝ ՀԱԷԿ-ի գործունեության արդյունավետ կառավարման ապահովման նպատակով, կայանում ներդրվել է հակակոռուպցիոն կառավարման համակարգ՝ միջազգային ԻՍՕ 37001:2016 ստանդարտի պահանջներին համապատասխան:

2025թ-ի մայիսի 13-ին հաստատվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ աշխատողների էթիկայի և ծառայողական վարքագծի» Կանոնագիրքը, որով ընդունվել է «Կոռուպցիայի հակազդման բնագավառում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ղեկավարության հայտարարագիրը, համաձայն որի՝ ՀԱԷԿ-ի բոլոր աշխատակիցները, անկախ զբաղեցրած պաշտոնից, դիրքից և կայանում աշխատելու տևողությունից, պետք է խստորեն պահպանեն հակակոռուպցիոն քաղաքականության սկզբմունքները և պահանջները, որոնք ուղղված են կոռուպցիային հակազդելու և կոռուպցիոն ռիսկի նվազեցմանը:

Կոռուպցիոն բնույթի փաստերի և կասկածների մասին տեղեկացնելու ընթացակարգ

1. Ինչի մասին է պետք տեղեկացնել

- պաշտոնական գործողություն կատարելու համար կաշառք պահանջելու, առաջարկելու, տալու, ստանալու, շորթելու կամ կաշառքի համար միջնորդելու մասին
- անձնական շահեր հետապնդելու նպատակով պաշտոնական դիրքը օգտագործելու /չարաշահելու/ մասին
- շահերի բախումների (անձնական շահագրգռվածություն, բարեկամական կապեր, փոխկապակցվածություն) մասին
- գնումների, մրցույթների վրա ապօրինի ազդեցություն գործադրելու մասին
- կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների և գնված ապրանքների ընդունման գործընթացներում թույլ տրվող խախտումների մասին (օրինակ՝ ընդունման ակտերի ստորագրում անապրանք գործարքների կամ թերի իրականացված մատակարարումների դեպքում, գնման առարկային չհամապատասխանող ապրանքի, ծառայության կամ աշխատանքի ընդունում և այլն)
- փաստաթղթերի, հաշվետվությունների և ստուգումների արդյունքների կեղծման մասին
- պաշտոնեական դիրքի օգտագործմամբ իրականացվող հովանավորչության մասին (օրինակ՝ տարբեր ոլորտներում նախապատվությունը ընկերներին, ազգականներին կամ քաղաքական դաշնակիցներին տալը)
- կոռուպցիոն բնույթի այլ գործողությունների կամ անգործության մասին:

2. Ով կարող է տեղեկացնել

- «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ցանկացած աշխատակից, անկախ զբաղեցրած պաշտոնից
- ժամանակավոր աշխատակիցները
- կապալառու կազմակերպությունների աշխատակիցները

3. Ինչպես ներկայացնել տեղեկատվությունը

- սահմանված կարգով փոխանցել «ՀԱԷԿ» ՓԲԸ ղեկավարությանը
- գրավոր (այդ թվում՝ **անանուն,** էլեկտրոնային հասցեին ուղարկված նամակով) կամ բանավոր ձևերով փոխանցել «ՀԱԷԿ» ՓԲԸ տնտեսական անվտանգության խմբի (ՏԱԽ) աշխատակիցներին

4. Ինչ պետք է պարունակի ներկայացվող տեղեկատվությունը

- իրադարձության էությունը /ինչ է տեղի ունեցել/
- իրադարձության տեղի ունենալու ամսաթիվը և վայրը
- մասնակից անձանց տվյալները
- հնարավոր ապացույցներ /փաստաթղթեր, նամակագրություն, վկաների վերաբերյալ տեղեկատվություն/

Տեղեկատվությունը քննարկվելու է անգամ ոչ լիարժեք տվյալների առկայության դեպքում, եթե այն ներկայացվել է բարեխղճորեն:

5. Երաշխիքներ կոռուպցիոն բնույթի փաստերի և կասկածների մասին տեղեկատվություն ներկայացնողներին

- տեղեկատվության աղբյուրի գաղտնիություն
- տեղեկատվություն ներկայացնող անձի պաշտպանություն
- բարեխիղճ ձևով տեղեկատվություն ներկայացնելու համար հետապնդման, ճնշման և խտրականության արգելք (տեղեկատվություն ներկայացրած անձի հետապնդումը հանդիսանում է ՀՀ օրենսդրության և ԻՍՕ 37001:2016 միջազգային ստանդարտի պահանջների խախտում)
- սահմանված կարգով ցանկացած տեղեկատվության քննարկում

6. Պատասխանատվություն

- միտումնավոր կեղծ տեղեկատվություն ներկայացնելը առաջացնում է պատասխանատվություն ՀՀ օրենսդրության համաձայն
- կոռուպցիոն բնույթի իրավախախտումների վերաբերյալ հայտնի դարձած տեղեկատվությունը ներկայացնելուց խուսափելը, տեղեկատվությունը միտումնավոր թաքցնելը, կամ տեղեկացված լինելը և անգործություն ցուցաբերելը կարող է դիտարկվել որպես ծառայողական պարտականությունների խախտում

Հուշաթերթը ենթակա է պարտադիր ծանոթացման «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի անձնակազմին և ՀԱԷԿ-ի հետ գործնական հարաբերությունների մեջ գտնվող բոլոր կապալառու կազմակերպությունների աշխատակիցներին:

Անհրաժեշտության դեպքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տնտեսական անվտանգության խմբի կողմից կտրամադրվի խորհրդատվություն՝ կոռուպցիոն երևույթներին հակազդելու ուղղությամբ:

Կոնտակտային տվյալներ՝

Տնտեսական անվտանգության խմբի /ՏԱԽ/ ծառայողական հեռախոսահամար՝ **30-40, 53-96**

ՏԱԽ ղեկավար Դավիթ Աշոտի Թովմասյանի անձնական հեռախոսահամար՝ **+374-93-21-25-67**

էլեկտրոնային փոստի հասցե /աշխատանքային/՝ davit.tovmasyan@anpp.am

էլեկտրոնային փոստի հասցե /անձնական/՝ david.ashot777@gmail.com